

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՎ ՇՓՄԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

Ա. Ս. ԱԼԵՋՍԱՆՅԱՆ

*Հաղորդակցման միջոցով կարծես տեղի է ունենում տրոհված մոնադաների վերամիավորում մեկ կետում, եզրայնացած երկու կենտրոնների վերակենտրոնացում:*

*Է. Արայան*

Ժամանակակից մանկավարժական և հասարակական մյուս գիտությունների հետազոտություններում առանցքային տեղ են զբաղեցնում հանրային հարաբերությունների հաղորդակցարանական վերլուծությունները:

Մանկավարժական գործունեությունը սերտորեն կապված է հաղորդակցման հետ, որի ուսումնասիրության հրատապությունը պայմանավորված է մանկավարժական գիտության զարգացման, հաղորդակցարանության տեսական ու գործնական խնդիրների լուծման հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս բացահայտելու հանրային այն կապերի ու հարաբերությունների նշանակությունը, որոնք նպաստում են արդի քաղաքակրթության պահանջներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը:

Մանկավարժական հաղորդակցարանության հետազոտության օբյեկտը մանկավարժական հաղորդակցման նախապատրաստումը, իրականացումն ու արդյունքն է, որտեղ առանցքային նշանակություն ունի և՛ մանկավարժական մասնագիտական, և՛ ոչ մասնագիտական գործունեությունը: Նմանատիպ հետազոտությունները նպաստում են մանկավարժական հաղորդակցանաբության կայացմանը՝ խթանելով աճող սերնդի դաստիարակության (մտավոր, հոգևոր ու ֆիզիկական) գործընթացում գիտականորեն հիմնավորված մեթոդների, տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմանը:

Դեռևս հին աշխարհում և անտիկ դարաշրջանում յմաստասերներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում մանկավարժական հաղորդակցմանը, դրա իրականացման եղանակներին ու հնարներին, հատկապես բանավոր և ոչ խոսքային միջոցներին: Այսպես, օրինակ, դեռևս Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Յիցերունը և ուրիշներ իրենց իմաստասիրական գործունեությունը կազմակերպում էին հաղորդակցման յուրահատուկ եղանակներով: Մասնավորապես «մարդը հաղորդակցական էակ է» բանաձևը, ըստ Արիստոտելի, հիմնավորվում էր հետևյալ կերպ՝ «ցանկացած պետություն յուրահատուկ շփում է, իսկ ցանկացած շփում կազմակերպվում է հանուն ինչ-որ բարօրության»<sup>1</sup>:

Վերածննդի ժամանակաշրջանի մտածող Վ. դա Ֆելտրեն մշակել է մանկավարժական հաղորդակցման այնպիսի եղանակներ, որոնց հիմքում հիմնականում ընկած է խաղը: Ըստ նրա՝ այդ դեպքում մանկավարժական հաղորդակցումն առավել արդյունավետ է ընթանում<sup>2</sup>: Հետագայում այդ սկզբունքները զարգացվեցին Ժ.-Ժ. Ռուտյի կողմից, որը մշակեց մանկավարժական հաղորդակցման հատուկ համակարգ՝ անվանելով այն «ազատ դաստիարակություն»<sup>3</sup>: Տեղին է նշել, որ նմանատիպ համակարգի զարգացումը պայմանավորված էր մարդկային քաղաքակրթության առաջընթացով, որին զուգընթաց

<sup>1</sup> **Аристотель. Политика**, // Сочинения. М., 1984, т. 4, с. 376.

<sup>2</sup> Հղումն ըստ՝ «Մանկավարժության պատմության քրեստոմատիա. Անտիկ դարեր. Միջին դարեր. Նոր դարաշրջանի սկիզբ»: Մանկավարժական բարձրագույն դպրոցների համար (կազմեց՝ Ի. Ֆ. Ակադովսկի), Եր., 1936, հ. 1, էջ 83:

<sup>3</sup> Մանրամասն տես **ժ.-ժ. Ռուտ**, Էմիլ կան դաստիարակության մասին, Եր., 1960, հ. 2, էջ 235:

աստիճանաբար կատարելագործվեց նաև արդյունավետ հաղորդակցման մանկավարժական ընթացակարգերը:

Արդի գիտելիքի դարաշրջանում հրատապ նշանակություն ունեն մանկավարժական հաղորդակցման արդյունավետ իրականացման եղանակները, որոնք պայմանավորված են կյանքային և դաստիարակության գործընթացում նոր մեթոդների ու չափանիշների կիրառման անհրաժեշտությամբ: Մշակվել են ընդհանուր հաղորդակցաբանության տարբեր մոտեցումներ՝ հաղորդակցման վերաբերյալ: Մշակվել են հայեցակարգեր, որոնցում հիմնավորվել են հաղորդակցման մանկավարժական առանձնահատկությունների ուսումնասիրության դերն ու նշանակությունը:

Հաղորդակցաբանության մեջ «մանկավարժական հաղորդակցում» և «մանկավարժական շփում» հասկացությունների սահմանման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, որոնք մասամբ հետևանք են նաև այն բանի, որ «հաղորդակցում» հասկացությունը գիտության մեջ առաջ է եկել ավելի ուշ՝ (XX դարում), քան «մանկավարժական շփում» հասկացությունը:

«Հաղորդակցում» հասկացությունը (լատ. *communicatio* - հաղորդում, *communicare* - խորհյալացել որևէ մեկի հետ, *communico* - ընդհանուր են դարձնում, կապակցում են, շփվում են) XX դարասկզբին առաջին անգամ ամբողջական համակարգի տեսքով ներկայացրել է Կ. Յասսեյսը<sup>6</sup>, որը հաղորդակցումը (կոմունիկացիան) դիտարկում էր երկու հայեցակետից.

1. որպես շփման գործառույթ՝ մտքերի փոխանակում լեզվի միջոցով;
2. որպես փիլիսոփայական (էկզիստենցիալիզմի և պերսոնալիզմի) կատեգորիա շփման իմաստով՝ հիմնված փոխըմբռնման ու բանավեճի վրա<sup>7</sup>:

Սովորաբար շփման հաղորդակցական գործառույթ ասելով հասկանում են տեղեկատվության փոխանակում՝ շփումը դիտարկելով ավելի լայն հասկացություն: Միաժամանակ, հաղորդակցումը դիտարկվում է որպես կապ, որի ընթացքում փոխանակվում կամ շրջանառվում է տեղեկատվություն մարդկանց և խմբերի միջև տարբեր միջոցների օգնությամբ<sup>8</sup>:

---


<sup>6</sup> Տե՛ս **А. Маслоу**. Мотивация и личность. СПб., 2006, էջ 201-202, **Ю. Хабермас**. Моральное сознание и коммуникативное действие. СПб., 2000, էջ 198-211, **Ш. Тейлор, Л. Пипло, Д. Сирс**. Социальная психология. СПб., 2004, էջ 469, **Э. Берн**. Игры, в которые играют люди. Психология человеческих взаимоотношений. Люди, которые играют игры. Мн., 2003, էջ 5-8, **Р. Немов**. Психология. Учебник. М., 2005, Կн. 1, էջ 512-538, **С. Кара-Мурза**. Манипуляция сознанием. М., 2004, էջ 246-271, **Э. Аронсон, Т. Уилсон, Р. Эйкерт**. Социальная психология. Психологические законы поведения человека в социуме. СПб., 2004, էջ 330, Основы теории коммуникации. Учебник (под ред. М. А. Василика). М., 2005, էջ 337-395, **Г. Почепцов**. Теория коммуникации. М., 2003, էջ 14-24, **Е. Ильин**. Мотивация и мотивы. СПб, 2006, էջ 205, **Ж. Пиаже**. Избранные психологические труды. Психология интеллекта. Генезис числа у ребенка. Логика и психология. М., 1969, էջ 142-174, **Л. Выготский**. Психология развития ребенка. М., 2005, էջ 200-224, **Е. Рогов**. Психология общения. М., 2001, էջ 6-17, **Н. Ньюкомб**. Развитие личности ребенка, СПб., 2003, էջ 377-389, **А. Реан, Я. Коломинский**. Социальная педагогическая психология. СПб., 2000, էջ 265-269, **Д. Шеффер**. Дети и подростки: психология развития. СПб., 2003, էջ 859, **А. Лобанов**. Основы профессионально-педагогического общения. М., 2004, էջ 33-58, **Н. Ефимова**. Психология общения. М., 2006, էջ 147-154, **У. Диксон**. Двадцать великих открытий в детской психологии. СПб., 2004, էջ 368:

<sup>7</sup> Տե՛ս <http://heatpsy.narod.ru/05/demo.html>:

<sup>8</sup> Հղումն ըստ՝ «Философская энциклопедия» (глав. ред. Ф. В. Константинов). М., 1964, т. 3, էջ 21:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>8</sup> Տե՛ս **А. Занковский**, Организационная психология: учеб. пособие. М., 2002, էջ 492, «Основы теории коммуникации» (под ред. М. Василика), էջ 126:



Ակնհայտ է, որ հաղորդակցումն ունի տեղեկատվական գործառույթ, սակայն այն չի նույնացվում տեղեկատվական գործընթացի հետ և ունի այլ գործառույթներ: Հաղորդակցումը տեղեկատվությունից տարբերվում է նաև նրանով, որ տեղեկատվության ժամանակ կարող է չլինել երկկողմանի գործընթաց, փոխհարաբերություն, իսկ հաղորդակցման ժամանակ այն պարտադիր է: Հաղորդակցումը տեղեկատվություն է այնքանով, որքանով հաղորդակցման ընթացքում պարտադիր են հաղորդող, տեղեկություն (հաղորդագրություն) և ընդունող: Հաղորդողի և ընդունողի միջև առկա է հաղորդման նյութը, որն ապահովում է որոշակի իմաստային դաշտ:

Այս դեպքում հաղորդակցումը տեղեկատվական գործընթաց է, որում տեղի են ունենում տեղեկությունների, մտքերի փոխանակում՝ նույնիսկ առանց ապրումակցման և հաղորդակիցների անհատական ընկալման կամ միջամտման հաղորդակցման: Սա կարելի է համարել հաղորդակցման միայն *ճեղ ընկալում*:

Հաղորդակցման սահմանման այլ մոտեցում է ներկայացնում է. Աթայանը, որի կարծիքով. «Չտված ձևով հաղորդակցումը հանդես է գալիս որպես սուբյեկտների շարակարգային լծորդում (մոնոադային կենտրոնների կապ, գիտակցությունների շփում)»<sup>9</sup>:

Նման մոդելին մանկավարժության տեսության մեջ թերևս համապատասխանում է հետևյալ սահմանումը. «Մանկավարժական հաղորդակցումը մանկավարժի կողմից կոնտակտի հաստատումն է սովորողների հետ դաստիարակչական նպատակներով»<sup>10</sup>: Կոնտակտի տակ հասկացվում է հետադարձ կապ, գործողությունների և վարքի փոխադարձ համաձայնեցվածություն, որտեղ կարևորվում է կոնտակտի հաստատումն ու դաստիարակչական նպատակը:

Հաղորդակցումը լայն իմաստով միայն տեղեկատվության փոխանակում չէ: Պատճառներից մեկն այն է, որ մանկավարժական հաղորդակցման ժամանակ հաղորդակիցներն ընդգրկվում են իրենց ողջ հոգեկան գործընթացներով, հուզական ներաշխարհով, և նույնիսկ կարող է տեղի ունենալ շփում հաղորդակցման ընթացքում:

Հաղորդակցումը կարող է լինել նաև ներամտման (ինքնահաղորդակցում), ներխընքային, միջմտքային: Այս դեպքում, ինչպես կարելի է նկատել, հաղորդակցումն ընթանում է բոլորովին այլ մակարդակում: Կապերը բազմաբնույթ են և ակնհայտորեն տեղի է ունենում *շփում հաղորդակցման ընթացքում*, այստեղ «շփումը մարդու մտածողության և ակտիվության յուրահատուկ կատալիզատոր է»<sup>11</sup>: Ասվածի վկայությունն է նաև մասնագիտական հաղորդակցումը, որը գիտակրթական գործունեության, ուսումնական փոխներգործության ձև է, մանկավարժի և սովորողների համագործակցության առանձնահատուկ եղանակ<sup>12</sup>:

Հաճախ հաղորդակցումն ու շփումը նույնացվում են՝ հաղորդակցումը դիտարկելով շփման ակտ մեկ կամ ավելի անձանց միջև՝ հիմնված փոխըմբռնման, մեկից մյուսին տեղեկատվության փոխանցման վրա<sup>13</sup>: Այսինքն՝ հաղորդակցումը շփումն է գործողության մեջ: Հաղորդակցումը հանգեցվում է շփմանը, որոնք նույնացվում կամ հոմանիշ հասկացությունների տեսքով են օգտագործվում և ամենևին էլ չեն նպաստում մեթոդաբանական հիմնահարցերի լուծմանը:

<sup>9</sup> Է. Ռ. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպարանավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 297:

<sup>10</sup> И. Подласый. Педагогика. Учебник. Кн.1. М., 2000, с. 269.

<sup>11</sup> Е. Андриенко, Социальная психология. Учебник. М., 2003, էջ 235:

<sup>12</sup> St'u "Современный словарь по педагогике" (сост. Е. Рапацевич). М., 2001, էջ 524:

<sup>13</sup> St'u С. Тер-Минасова, Язык и межкультурная коммуникация. М., 2000, էջ 11:

Ըստ Գ. Անդրեևայի՝ շփումը միջանձնային հարաբերությունների ամբողջական համակարգի իրագործումն է, իսկ հաղորդակցումը կարող է լինել շփման գործառույթ: Սակայն հաղորդակցումը նաև ինքնուրույն գործընթաց է, որին պետք է մոտենալ յուրահատուկ ըմբռնումով և միայն հաղորդակցմանը բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ<sup>14</sup>: Այսպես, Ա. Պետրովսկին և Մ. Յարոշևսկին հաղորդակցումը սահմանում են որպես հասարակական փոխներգործության իմաստային կողմ, քանզի հասարակության ցանկացած գործողություն իրականանում է այլ մարդկանց հետ ուղղակի կամ անուղղակի հարաբերությունների պայմաններում՝ ընդգրկելով (ֆիզիկականի հետ մեկտեղ) հաղորդակցական ոլորտը<sup>15</sup>, որտեղ դրսևորվում են հաղորդակցման միջանձնային, հրապարակային, զանգվածային տեսակները: Իսկ շփումը սահմանում են որպես մարդկանց միջև կոնտակտի հաստատման բարդ ու բազմաբովանդակ գործընթաց, որն առաջանում է համատեղ գործունեության պահանջմունքից և ներառում է տեղեկատվության փոխանակում, փոխներգործության միասնական ռազմավարության մշակում, փոխըմբռնում ու փոխընկալում<sup>16</sup>:

Եթե շփման համար անհրաժեշտ է համատեղ գործունեության պահանջմունք, ապա հաղորդակցման համար այդ պահանջմունքը պարտադիր չէ: Այսպես, մանկավարժական մասնագիտական հաղորդակցման դեպքում, նամանավանդ կրտսեր դպրոցում, երեխան չի ունենում ուսուցչի հետ հաղորդակցվելու պահանջմունք, որովհետև «կրտսեր դպրոցում առաջատար է դառնում հասակակիցների հետ հաղորդակցվելու պահանջմունքը, և ձևավորվում է շփման հաստատուն փոքր շրջան»<sup>17</sup>: Չնայած դրան, այնուամենայնիվ, մանկավարժը կազմակերպում ու իրականացնում է համարժեք հաղորդակցում:

Ըստ Լ. Բուևի՝ շփումը հասարակական սուբյեկտների (անձեր, խմբեր) փոխկապվածության ու փոխներգործության գործընթաց է, որը բնութագրվում է փորձի, գործունեության, տեղեկատվության, ընդունակության, հմտությունների ու կարողությունների, ինչպես նաև գործունեության արյունքների փոխանակումով՝ որպես հասարակության կողմից անձի ձևավորման անհրաժեշտ ու բավարար պայման<sup>18</sup>: Շփումը անհրաժեշտ պայման է մանկավարժական հաղորդակցման համար, քանզի մանկավարժական հաղորդակցումը նպատակ ունի ձևավորելու ու զարգացնելու երեխայի անձը:

Շփումը սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություն է և, ըստ Մ. Կազանի, այդպիսին է մինչև այն պահը, երբ սուբյեկտը պահպանում է իր սուբյեկտայնությունը այլ սուբյեկտի հետ ունեցած փոխհարաբերություններում, իսկ վերջինս վերաբերում է իր զույգին որպես սուբյեկտի և ոչ թե օբյեկտի: Դրանով էլ շփումը տարբերվում է հաղորդակցումից<sup>19</sup>: Մանկավարժական հաղորդակցման դեպքում մանկավարժը (նախաձեռնողը) երեխային (հաղորդակցին) վերաբերվում է որպես ներուձակ ակտիվությամբ օբյեկտի, որը ենթակա է բացահայտման (ինքնաբացահայտման) ու փոփոխման (ինքնափոփոխման):

Ինչպես պարզ է դառնում, շփումն ընկալվում ու մեկնաբանվում է որպես երկու ակտիվ սուբյեկտների միջև տեղի ունեցող սերտ կապ: Այդ կապը իրականանում է հոգեբանական մակարդակում: Շփման մեջ և՛ իմացական մակարդակը, և՛ ֆիզիկականը կառուցվում են հոգեբանական հիմքերի վրա:

Հաղորդակցման ժամանակ մարդը կարող է հաղորդակցվել հեռախոսով, նամակագրությամբ, ռադիոկապով, գաղտնի հաղորդագրությամբ կամ ծածկագրով (հեռահաղորդակցում և տարահաղորդակցում): Հաղորդակցման գործընթացին կարող են մասնակցել մեկից մինչև անսահմանափակ քանակությամբ մարդիկ, խմբեր, հասարակությունը (զանգվածային) և հնարավոր այլ սուբյեկտներ:

<sup>14</sup> Տե՛ս Գ. **Андреева**. Социальная психология. М., 1999, էջ 77:

<sup>15</sup> Տե՛ս «Психология. Словарь» (под общ. ред. А. Петровского, М. Ярошевского). М., 1990, էջ 168:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 244:

<sup>17</sup> **Е. Ильин**, նշվ. աշխ., էջ 213:

<sup>18</sup> Տե՛ս **Е. Андриенко**, նշվ. աշխ., 2003, էջ 180:

<sup>19</sup> Հղումն ըստ՝ **А. Лобанов**, նշվ. աշխ., էջ 11:

Այստեղից բխում է «հաղորդակցում» և «շփում» հասկացությունների փոխհարաբերության վերաբերյալ հաջորդ մտտեցումը: Հաղորդակցում ասելով հասկանում են կոմունիկացիաներ\*, որոնց միջոցով իրականանում է շփումը, հաղորդումը<sup>20</sup>:

Հաղորդակցումն ընդհանուր իմաստով կարող է լինել ոչ միայն մարդկանց միջև, այլև բնության և մարդու ստեղծած համակարգերի (միջնշակութային հաղորդակցում, տեխնիկական, թվային և այլն), տեխնիկական միջոցների, կենդանիների, մարդու և կենդանիների և այլ համակարգերի միջև: Այսինքն՝ հաղորդակցումը երկու համակարգերի փոխներգործությունն<sup>21</sup> (կապն) է, որի ընթացքում մի համակարգից մյուսին են փոխանցվում տեղեկատվություն պարունակող ազդակներ:

Վերը նշվածից ելնելով՝ որոշ տեսաբաններ հիմանվորում են այն դրույթը, որ հաղորդակցումն ավելի լայն հասկացություն է և մոտ է «շփում» հասկացությանը, որովհետև ներառում է իր մեջ փոխներգործություն տեղեկատվական միջոցների հետ<sup>22</sup>:

Հաղորդակցումը ներառում է շփումը, կամ, այլ կերպ ասած, շփումը հաղորդակցման տեսակ է<sup>23</sup>: Մանկավարժական հաղորդակցման ժամանակ ոչ միայն տեղեկատվության փոխանակում է տեղի ունենում, այլև մյուս հաղորդակիրների հետ շփվելու, ճանաչելու, համագործակցելու, վարքի ձևերը փոխհամաձայնեցնելու, ինքնաբացահայտման, ինքնակատարելագործման և այլ գործընթացներ:

Լայն առումով հաղորդակցումը ներառում է շփման մյուս գործառույթները, այն դեպքում, երբ հաղորդակցումն իրականանում է ոչ միայն գիտակցության մտավոր-տրամաբանական մակարդակում, այլև ֆիզիկական և հոգևոր:

Հիմնվելով է. Աթայանի մշակած հաղորդակցման հայեցակարգի վրա՝ անհրաժեշտ է նշել, որ հաղորդակցումը լայն առումով իր մեջ ընդգրկում է սուբյեկտների ոչ միայն տեսական-լեզվական, այլև հոգեկան ու գործնական, ինչպես նաև բնագոյային-կենսաբանական և զուտ ֆիզիկական շփման բոլոր դեպքերը սուբյեկտայնության զարգացման տարբեր մակարդակներում:

Մանկավարժական հաղորդակցման ժամանակ ոչ միայն ընկալվում է ամբողջ տեղեկությունը աշակերտի կողմից, այլև ինքն է ստեղծագործում այդ տեղեկության հիման վրա, կատարում որոնումներ, եզրահանգումներ, ստեղծում նորը և իր ստեղծածը հաղորդում մանկավարժին ու մյուս աշակերտներին: Օրինակ՝ երբ դասանյութի տպավորությունները երեխաները հանձնում են թրփին գույների միջոցով, երաժշտություն են ընտրում չափածո ստեղծագործության համար, հանելուկներ են հորինում և այլն: Այսպիսի գործընթացում տեղեկությունը ոչ միայն ընկալվում է, ոչ միայն տեղի է ունենում տեղեկատվության փոխանակում, այլև ընկալող սուբյեկտի մեջ ընդլայնվում և դրսևորվում է:

Մանկավարժական հաղորդակցումը հաղորդակցման այլ տեսակներից տարբերվում է այն բանով, որ հաղորդակցական գործընթացի սուբյեկտներից գոնե մեկը նպատակաուղղված ազդում է իր համագործակիցների, ենթակաների կամ շրջապատի մարդկանց վրա՝ նրանց մեջ որոշակի որակի ձևավորման և զարգացման նպատակով<sup>24</sup>:

Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է **համարժեք մանկավարժական հաղորդակցում**\*\* իրականացումը, որն անհրաժեշտ ու բավարար պայման է գործողությունների

\* Այստեղ «կոմունիկացիա» եզրույթը հայերենում համաժեք չունի և չի թարգմանվում: Այն գործածվում է հոգևակի և հասկացվում է համակարգեր, գործընթացներ, մեթոդներ, միջոցներ, տեղեկատվության փոխանակման ուղիներ մարդկանց կամ կենդանիների միջև, նույնիսկ ընդհուպ մինչև հաղորդման իրականացման տեխնիկական հնարավորություններ ու հարմարանքներ:

<sup>20</sup> Տե՛ս **С. Тер-Минасова**, նշվ. աշխ., էջ 11-12:

<sup>21</sup> Տե՛ս **Е. Ильин**, նշվ. աշխ., էջ 205:

<sup>22</sup> Տե՛ս “Педагогика” (под ред. П. Пидкасистого), էջ 291, “Педагогика. Большая современная энциклопедия” (сост. Е. Рапацевич). М., 2005, էջ 236:

<sup>23</sup> Տե՛ս **Е. Ильин**, նշվ. աշխ., էջ 205:

<sup>24</sup> Տե՛ս “Педагогика”. Учебное пособие (под ред. П. Пидкасистого). М., 2006, էջ 293:

\*\* Այս իմաստով նպատակահարմար է ներմուծել «**համարժեք մանկավարժական հաղորդակցում**» և «**ոչ համարժեք մանկավարժական հաղորդակցում**» հասկացությունները, որոնք ցույց

փոխհամաձայնեցման հասնելու համար: Հակառակ դեպքում մենք գործ կունենանք *ոչ համարժեք* կամ *անհամարժեք մանկավարժական հաղորդակցման* հետ:

Մանկավարժական հաղորդակցման նման սահմանազատումը հնարավորություն է տալիս համակողմանիորեն ուսումնասիրելու այդ գործընթացում ներգրավված սուբյեկտների գործողությունների (անկախ տարիքից, մասնագիտությունից) նպատակաուղղվածությունը: Այստեղ բախվում ենք Լասվելի հետևյալ հարցադրումների՝ ո՞վ, ի՞նչ մտադրությամբ, ի՞նչ հանգամանքներում, ի՞նչ ներուժով, ինչպիսի՞ր ռազմավարություն կիրառելով, ինչպիսի՞ր լարանի վրա ազդեցություն ունենալով, ի՞նչ արդյունքով<sup>25</sup>: Մանկավարժական հաղորդակցման մասնագիտական և ոչ մասնագիտական միջավայրում հաղորդակիցների հնարավորություններին ու ընդունակություններին համարժեք հաղորդակցումն առաջին հերթին պայմանավորված է հաղորդակցումը կազմակերպող անձով, նրա գործելաճով: Այդ է պատճառը, որ մանկավարժական հաղորդակցման արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է կոմունիկատորի կողմից իրականացվող գործունեության համարժեքությամբ: Համարժեքությունն իր հերթին բնութագրում է մանկավարժական հաղորդակցման մշակույթը:

Ըստ Ա. Լոբանովի, ամենուր, որտեղ գոնե մեկ մարդ սկսում է փոխներգործել մյուս մարդկանց (կամ մարդկանց խմբի) վրա որպես ուսուցիչ-աշակերտ կամ դաստիարակ-դաստիարակվող, այնտեղ անպայմանորեն առաջանում են մանկավարժական հաղորդակցման հիմնահարցեր<sup>26</sup>:

Հիշյալ հիմնահարցերի լուծման կարողությամբ էլ պայմանավորված են մանկավարժական հաղորդակցման սուբյեկտների գործառույթային տրոհվածությունը: *Մանկավարժական հաղորդակցման առանցքային սուբյեկտ* կարող է լինել ոչ միայն մանկավարժը, այլ նաև այն անձը, ով մղում է երեխային սուբյեկտային գործունեության՝ ազդելով նրա սուբյեկտայնության «կենտրոնին»: Իսկ հաղորդակցման միջավայրում ներգրավված մյուս սուբյեկտները կունենան *հիմնական, հարակից և օժանդակ սուբյեկտների* կարգավիճակ:

Հաղորդակցման ժամանակ տեղի է ունենում այդ սուբյեկտների հերթագայություն, որը պայմանավորված է անձի սոցիալականացման գործընթացով: Ընդհանրապես աշակերտը (երեխան) *ներունակ* սուբյեկտ է, որի դրսևորումը կախված է հաղորդակցման առանցքային սուբյեկտի գործողություններից: Մարդը հաղորդակցվող էակ է՝ *homo communicus*, իսկ դա նշանակում է, որ նա միտված է հաղորդակցվելու, այսինքն՝ *հաղորդակցամետ* է, որը պայմանավորված է նրա ունեցած հաղորդակցական կարողություններով, պատրաստակամությամբ, նպատակով, մյուս հաղորդակիցների հետ ունեցած փոխհարաբերություններով, շարժառիթներով ու դրդապատճառներով, գիտակցության մակարդակով և, ինչպես, այն միջավայրով ու իրադրությամբ, որտեղ տեղի է ունենալու հաղորդակցումը: Է. Աթայանը այս բոլորի միասնությունն անվանում է «հաղորդակցական արժույթայնություն»՝ հաղորդակցական ակտի իրականացման անմիջական նախադրյալ: Նա նշում է, որ երբ այս ամենը հանգում է փոխադարձ ներաշնչանկության վիճակի, ստեղծվում են հաղորդակցական հնարավորությունը համապատասխան դիտավորության վերածվելու անիրաժեշտ և բավարար պայմաններ, որոնցում հաղորդակցական ակտը վրա է հասնում անխառնափոխի<sup>27</sup>:

Սակայն միայն հաղորդակցական գործընթացի մեջ ներկա գտնվելը բավական չէ:

---

են տալիս, թե որքանով է իրականացվող մանկավարժական գործունեությունը համապատասխանում (բավարարում) հաղորդակիցների պահանջումներին ու հնարավորություններին: Համապատասխանության դեպքում այն *համարժեք մանկավարժական հաղորդակցումն* է, իսկ անհամապատասխանության դեպքում՝ *ոչ համարժեք կամ անհամարժեք մանկավարժական հաղորդակցումը*:

<sup>25</sup> Տե՛ս Գ. Լասվել. Структура и функции коммуникации в обществе, в кн.: "PR - связь с общественностью. Хрестоматия". М., 2002, էջ 131:

<sup>26</sup> Տե՛ս Ա. Լոբանով, նշվ. աշխ., էջ 11:

<sup>27</sup> Տե՛ս Է. Ա. Աթայան, նշվ. աշխ., էջ 330:

Անհրաժեշտ է, որ հաղորդակիցների միջև տեղի ունենա փոխըմբռնում, փոխհամագործակցություն, ապրումակցում, շփում, իսկ հաղորդակիցների ներուճակությունները դրսևորվեն լիարժեք: Իսկ հաղորդակցական ակտի ավարտում և լիարժեք ելքի համար անհրաժեշտ է հաղորդակիցների փոխադարձ վստահություն և շահագրգռվածություն: Այսինքն՝ նրանք լինեն հաղորդակցակենտրոն:

Ըստ Ե. Անդրիենկոյի՝ օբյեկտիվորեն ուսուցչի և աշակերտի դիրքորոշումները հավասարազոր չեն տարիքային, սոցիալական ու ընդհանրական տարբերությունների պատճառով: Մակայն սուբյեկտիվորեն երկու կողմերն էլ հետաքրքրված են դիրքորոշումների հավասարման մեջ: Այդ յուրահատուկ հարաբերությունները կրում են մանկավարժական շփման հենքային (բանալի) հակասությունը, որը միաժամանակ շփման զարգացման աղբյուրն է<sup>26</sup>:

Մանկավարժական հաղորդակցում ասելով շատ հաճախ հասկացվում է ուսուցչի և աշակերտի միջև դասի ժամանակ տեղի ունեցող հաղորդակցումը: Մակայն այն *մանկավարժական հաղորդակցման միջավայրի* միայն մի մասն է, որովհետև ամենատարբեր փոխհարաբերությունների մեջ կարող է լինել մանկավարժական հաղորդակցում: Այդ միջավայրի առանձնահատկությամբ էլ պայմանավորված են մանկավարժական հաղորդակցման մակարդակները, որտեղ իրենց հնարավորություններն են դրսևորում ոչ միայն ուսուցիչը, դաստիարակը, այլև շրջապատի մարդիկ, ընկերները, ծնողները և ուրիշներ: Այլ կերպ ասած՝ մանկավարժական հաղորդակցումը պայքար է դաստիարակման, աշխարհայացքային կողմնորոշման և արժեքային համակարգի ներդրման համար, որն ուղեկցվում է ինչպես հաջողություններով, այնպես էլ անհաջողություններով ու սխալներով:

Մանկավարժական հաղորդակցումն ընկած է մանկավարժական գործունեության հիմքում, որը կարող է լինել նպատակ (ինքննպատճառ հաղորդակցում), իսկ նպատակի գիտակցումից հետո՝ դրան հասնելու միջոց: Մանկավարժական հաղորդակցումը հաղորդակցման այնպիսի տեսակ է, որն ընդգրկում է ներմիջսուբյեկտային մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև *հարստահարողակցական* հանգամանքները:

Ի դեպ, թերի է մասնագիտական գրականության մեջ գերակայող այն տեսակետը, որի համաձայն մանկավարժության և հաղորդակցաբանության միջառարկայական կապը դիտարկվում է հիմնականում *մանկավարժական հաղորդակցման* շրջանակներում: Հիշյալ համատեքստում առկա են նաև *հաղորդակցման ոչ մանկավարժական և հակամանկավարժական* տեսանկյուններ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ մանկավարժական հաղորդակցման գործունեությամբ զբաղվում են ոչ միայն մանկավարժները, որով էլ պայմանավորված է *մանկավարժական հաղորդակցման ռիսկը*<sup>27</sup>: Քանի որ մանկավարժական հաղորդակցման հիմնական առանձնահատկությունն այն է, որ մենք գործ ունենք աճող սերնդի հետ, մանկավարժական հաղորդակցման նպատակները կարող են լինել բազմաբնույթ, սակայն հաղորդակցումը վերջին հաշվով բացահայտում, դաստիարակում, զարգացնում է երեխային, ձևավորում է ժամանակակից պահանջներին համապատասխան անձ: Յուրաքանչյուր մարդ հաղորդակցվում է ըստ իր հագեկան գործընթացների (հաղորդակցման ժամանակ ակտիվության աստիճան, տրամադրվածություն հաղորդակցական հարաբերություններին, տարիքային առանձնահատկություններ և այլն), գիտելիքների (ինչ գիտելիքների ու հաղորդակցական կարողությունների է տիրապետում), ֆիզիոլոգիական զարգացման ընձեռած հնարավորությունների (մարդը կարող է ունենալ ֆիզիկական զարգացման հապաղումներ կամ թերացումներ՝ խուլ-համր, կույր և այլն), պահանջմունքների ու ապլումների: Այս տեսանկյունից անհրաժեշտ է, որ հաղորդակցումը լինի համարժեք հաղորդակիցների հնարավորություններին ու ընդունակություններին:

<sup>26</sup> Տե՛ս Ե. Андриенко, նշվ. աշխ., էջ 196:

<sup>27</sup> Այս իմաստով նպատակահարմար է ներմուծել «*մանկավարժական հաղորդակցման ռիսկ*» հասկացությունը, որը ցույց է տալիս, որ մանկավարժական հաղորդակցումը յուրահատուկ մրցակցություն (պայքար է) մանկավարժական, հակամանկավարժական, ոչ մանկավարժական, հարամանկավարժական մեթոդների միջև:

Այսպիսով, մանկավարժական հաղորդակցումը գործունեության այնպիսի եղանակ է, որի ընթացքում սուբյեկտը (կոմունիկատորը) նպատակաուղղված փոխներգործության միջոցով կողմնորոշում և դաստիարակում է հաղորդակիցներին՝ ծրագրավորելով իր գործունեությունը հաղորդակցի հնարավորություններին համարժեք:

**А. С. АЛЕКСАНИЯН — К вопросу о взаимоотношении педагогической коммуникации и общения.** — В статье анализируются понятие, основные определения, концепции и выдвигается авторская версия взаимоотношений педагогической коммуникации и общения. Объектом педагогической коммуникативистики является подготовка, реализация и результат педагогической деятельности и отношений. Последнее включает в себя не только педагогическую профессиональную, но и педагогическую непрофессиональную, непедагогическую и антипедагогическую деятельность. В контексте рассматриваемых проблем автор вводит в научный оборот следующие понятия: “*стержневый субъект педагогической коммуникации*”, “*адекватная педагогическая коммуникация*” и “*неадекватная педагогическая коммуникация*”, “*риск педагогической коммуникации*”, а также выдвигается авторская версия определения педагогической коммуникации: “*педагогическая коммуникация — это способ деятельности, при котором с помощью целенаправленного воздействия субъект (коммуникатор) ориентирует и воспитывает коммуниканта, программируя свою деятельность адекватно возможностям последнего*”.